№ 43 Մարտի 10 (22) 1881 Մարտի 10 (22) № 43

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Բաժանորդագրութեան դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է ամեն օր 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի հաղորդութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիա. Թիւրքիա. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մոսկվայի հնագիտական ընկերութիւն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

—

Թիֆլիսում սահմանված է մի ժամանակաւոր կոմիտէտ արուեստագործական վիստավկայի, այսինքն արուեստից հանդէսի, որ բացվելու է Մոսկվա քաղաքում այս տարի մայիսի 1-ին: Այս կոմիտէտի վրա պարտաւորութիւն է դրված Կովկասում բնակվող և հանդէսին իրանց առարկաները ուղարկել ցանկացող անձանց տալ հանդէսի մասին հարկաւոր տեղեկութիւնները, տալ տեղեկութիւններ առարկաներ ուղարկելու կարգի մասին և նոյն իսկ յանձն առնել առարկաներն ուղարկել հանդիսին:

Վասնորոյ, ի նկատի ունելով հանդիսի շուտով բացվելը, ժամանակաւոր կոմիտէտը հարկաւոր է համարում հրատարակելու հետեւեալ տեղեկութիւնները հանդիսին մասնակից լինելու և առարկաներն ուղարկելու ցանկացող անձանց համար:

1. Գործեր ուղարկողները պարտ են առարկաներն ուղարկելուց առաջ ներկայացնել ժամանակաւոր կոմիտէտին երկու յայտարարութիւն ուղարկվող առարկաների մասին, իսկ իրանք առարկաները պէտք է ուղարկվին երեք ծանուցագրերով (փակտուրայով): Առարկաները չեն ընդունվի և չեն տեղաւորվի հանդիսի մէջ, եթէ փակտուրա չը լինի:

2. Առարկաներն ամուր գործելու և հանդէսն ուղարկելու, նոյնպէս յետ դարձնելու ծախսը աէրութեան կողմից հաստատված հանդէսի խնամատարութեան 5 և 20 յօդուածների համաձայն պէտք է լինի առարկաները հանդիսին ուղարկողների հաշւով:

3. Առարկաների ընդունելը վիստավկայի շէնքութեան մէջ կը սկսվի մարտ ամսի 15-ին և կը շարունակվի մինչև 1 մայիսի:

4. Գործեր ուղարկողները կարող են իրանց առարկաներն առաջարկել անձամբ անձին, կամ իրանց հաւատարմատարների (պօվէրէննի) ձեռքով, կամ յանձնել կոմիսարներին և սահմանադրեալ փորձով հանդիսում գտնվող մակլէրին: Բայց որովհետև Կովկասում բնակվողներից շատերը կարող են դժուարութեան հանդիպել իրանց առարկաները հանդիսին ուղարկելու վերաբերութեամբ, այդ պատճառով ժամանակաւոր կոմիտէտը միջնորդում է որ հանդիսում նշանակվին Կովկասի ներկայացուցիչները, որոնք պարտաւոր կը լինեն հոգալ առարկաներն ընդունելու և հանդիսում տեղաւորելու մասին, նոյնպէս և պահպանել, առհասարակ, այն անձանց շահը, որոնք առարկաներ կուղարկեն հանդէսը:

Այդ պատճառով. Ա. Կովկասի հիւսիսային կողմերում բնակվողները կարող են յարմար կերպով ուղարկել իրանց առարկաները ուղղակի հասցէով Մոսկվայի արուեստագործական հանդիսի Կովկասի բաժնի վարչութեանը: Բ. Կասպից և Սեւ ծովերին մօտիկ բնակվողներին աւելի յարմար կը լինի առարկաները ծովով ուղարկել, նոյնպէս նոյն հասցէով: Գ. Իսկ Կովկասի մնացեալ բոլոր ուղարկողները կարող են ուղարկել իրանց առարկաները ուղղակի Թիֆլիս, ժամանակաւոր կոմիտէտի անունով, նրանց հետ միասին ուղարկելով փակտուրան, որքան պահանջվում է:

5. Յաւելված բացատրութիւններ և փակտուրաներ և ամենայն տեսակ տեղեկութիւններ ստանալու համար, ինչ որ վերաբերվում է հանդէսին, ցանկացողները կարող են դիմել Կովկասի ժամանակաւոր կոմիտէտին, որ գտնվում է Կովկասեան արքունական կալուածների վարչութեան բաժնում գլխաւոր կառավարութեան մէջ, Թիֆլիս քաղաքում, Վէլիամինովի տանը, հետեւեալ գրաւոր հասցէով: Въ Кавказскій вспомогательный комитетъ Всерос. промышленно-художественной выставки.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր, մարտի 10-ին քննվելու է ԹԻՖԼԻՍԻ գաւառական դատարանում Ալէքսանդր Սկլիֆօսի գործը, որ մեղադրվում է Բէհմանովի սպանութեան մասնակցելու մէջ:

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են որ այդտեղի մի պարոն, Սիմէոն Հախումեանց, շատ է աշխատում հրատարակել մի հայերէն ամսագիր «Գործ» անունով: Չը նայելով որ պարոնը իր ուսման ընթացքը աւարտել է Էջմիածնի ճեմարանում, սակայն նա, ինչպէս երեւում է, մինչև այժմ հասու չէ Էջմիածնի անգործունէութիւններ, մանաւանդ այն ամենը որին անհնարին է եղել բերել:

—

Շուշից մեզ հաղորդում են որ այդ քաղաքում ալիւրի պուտը արժէ այժմ 85 կոպէկ, իսկ գարին, պուտը 45 մինչև 50 կոպէկ: Այդ թանկութեան պատճառով մի քանի հացագործներ սնանկացած մեծ վնասներ կրել:

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ յայտնել որ հոգաբարձական խորհրդարանի մէջ մարտ ամսիս 18-ին, երեկոյեան 8 ժամին, կը լինի ժողով, առանց երկրորդի, կապալով տալու հանգուցեալ Գրիգոր Շէրգիլեանցից ընծայած կրպակը իր ներսում, որ գտնվում է հայոց, նոյն է Սիէլի փողոցում. Պայմանագիրը (կոնդիցիան) կարելի է կարդալ հոգաբարձութեան գրասենեակը ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, 10 ժամից մինչև 12 ժամ ցերեկվայ:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքում գողութիւններն և աւազակութիւնները շատացել են. Մի քանի օր առաջ Թուրքերը Զանգու գետի մօտ մի մշակին կառավարին սպանել են և նորա կառքը քշել փախցրել են. Իսկ երէկ գիշեր, մարտի 1-ին մի թուրք քաղաքի փողոցներում և երկու թուրք հրապարակական պարտէզի մօտ սպանված գտնվեցան. Ջարդարարները անյայտ են.»

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ հետեւեալը. «Փետրվարի 28-ին երեկոյեան 7 ժամին Գայիանեան օրիորդական ուսումնարանի դահլիճում Երեւանի քաղաքային բժիշկ Լեւոն Տէր-Գրիգորեանց դասախօսեց Երեւան քաղաքի առողջապահական պայմանների վրա մի շատ բովանդակալից և հետաքրքիր ծրագրով. Լսարանը լի էր ունկնդիրներով, բոլորն էլ գոհ եղան և բուռն ծափահարութիւններով վարձատրեցին դասախօսին. Պ. Տէր-Գրիգորեանը շատ համառօտ կերպով էր խօսում, սրախօսութիւններ էլ անում էր և ժողովրդի երեսին էր տալիս նորա առողջապահական անհոգութիւնները»

—

Մեզ հեռագրում են ԵՐԵՒԱՆԻՑ հետեւեալը. «Մարտի 6-ին քաղաքային դուման քննելով այն հարցը թէ գիմնազիայի շինութեանը յատկացրած գետինը պէտք է ընդարձակել թէ ոչ, վճռել է աւելացնել այդ գետնին Կարգանովի հողի կտորը, գնելով նրանից այդ գետինը և վճարելով նրան քաղաքային գանձարանից 3000 րուբլ. Այդ վճռից յետոյ հասկանալի է որ երկու ուսումնական թեկ [illegible] տեղիս գիմնազիայի կրկնար-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(Նիստ հինգերորդ, 18-ին փետրվարի)

—

Այս անգամ ես մտադիր եմ ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին Մոսկվայի հնագիտական ընկերութեան մէջ կարդացած կոմս Ուվարովի ընթերցուածքի հետ—«Թէ ինչ տեղ է գտնվում հայոց հին մայրաքաղաքը—Արմաւիր»—մի բովանդակալից և արժանի ուշադրութեան հետազօտութիւն, որ, յուսով եմ՝ հետաքրքրական կը լինի մեր բանասէրների. մանաւանդ՝ նկատողութեան առնելով այն շարժումը ու ոգեւորութիւնը, որոնք վերջին ժամանակ սկսել են նկատվել հայերի մէջ Թիֆլիսի առաջիկայ հնագիտական ժողովի առթիւ և որոնք ցանկալի է աւելի իրական, աւելի շօշափելի հետեւանք ունենային.—Բայց առաջ քան սկսելը այս տեսակ հետազօտ ընթերցուածքը հաղորդելը, ես աւելորդ չեմ համարի մի հարեւանցի հայեացք ձգել մեր պատմութեան վրա և երկու խօսք ասել Արմաւիրի մասին, որպէս զի աւելի հասկանալի լինի ընթերցողին այն մեծ նշանակութիւնը, որ կարող է ունենալ հայոց հնագիտութեան և պատմութեան համար այդ հին թագաւորանիստ քաղաքի տեղը որոշելը և այդ տեղում փորումներ և խուզարկութիւններ անելը:

Արմաւիր անունը առաջին անգամ պատահում ենք՝ ըստ խորենացու՝ 1975 թ. Քրիստոսից առաջ—Արմենակի որդի Արմայիսի ձեռքով շինված կոփածոյ քարերից մի բլուրի վրա—Արարատի ստորոտին. Դա առաջին և գլխաւոր քաղաքն էր հայոց, որ յետոյ եղաւ թագաւորանիստ՝ մինչև Հայկազանց իշխանութեան քայքայումը. Այս քաղաքը բերեց քաջ Արամը Մարաց պատերազմների առաջնորդ Նիւքարին և այս բարձր պարիսպների աշտարակից կախեց նրան՝ ի տես անցաւորաց և ամենայն եկելոց անցորդաց—ինչպէս ասում է խորենացին (Գ. Ա. գլ. 13). Արմաւից էր գտնվում Արամանեակեան սօսեաց սրբազան անտառը, որի տերեւների սօսափիւնից կամ սաստիկ շարժվելով հմայում էին հին հայոց հմայողները և գուշակները. Այս անտառը նուիրական տեղ էր համարվում և նրան ձօնում էին երեւելի անձանց. այսպէս՝ Արայի թոռ Անուշաւանը նուիրված էր այդ սօսիներին. Արմաւիրում շինեց Վաղարշակ Ա. (Քրիստոսից մօտ 140 տարի առաջ) փառաւոր մեհեան՝ *) հաստատելով անդրիս արեգական, լուսնի և իւր նախնեացը. որոնք և մօտ 30 տարի յետոյ այստեղից բերել տուեց Արտաշէս Ա. Լիւդէացի Կրեսոսին յաղթելուց գերի պղնձաձոյլ—ոսկեզօծ արձանները Արտեմիդի, Հերակլէսի և Ապոլոնի, որոնցից վերջինին հայ քրմապետները Վահագնի տեղ ընդունեցին Արտաշէսի մահից յետոյ՝ տարան դրին իրանց մեհեանի գիւղը—Աշտիշատ. Վաղարշակը այս քաղաքում իր առաջին հայկական նահանգի համար թագաւոր նորոգել կամ շինել իր արքունիքը և զարդարել նրան զանազան շինութիւններով և արձաններով: Բայց դրանից առաջ կար մեծ գաղթականութիւն հրէից, որոնց տեղաւորել էր Տիգրան երկրորդը՝ իր Պաղեստինի արշաւանքից յետոյ (Քրիստոսից մօտ 80 տարի առաջ) և որոնք կարող էին դիւրաւ կերպով նպաստած լինել մայրաքաղաքի առեւտրից և արդիւնագործութեան ծաղկելուն.—Այս բոլորից երեւում է որ Արմաւիրը եղել է մի շէն, հարուստ, բազմամբոխ և բազմամարդ քաղաք. Եւ թէպէտ ժամանակից՝ արքունական աթոռը տեղափոխվեց Արմաւիրից ուրիշ կենտրոններ, թէպէտ այս մայրաքաղաքի զարդերից և արձաններից շատերը տարուեցան Բագարան, Արտաշատ և Արտաւազդաշատ, թէպէտ՝ ասում ենք՝ դարերից յետոյ մեծ փոփոխութիւններ կրեց Արմաւիրը թէ թշնամու արշաւանքներից և թէ երկրաշարժից և հրապուրիչ վիճակներից—այնուամենայնիւ՝ մենք համոզված ենք, որ նրանից պէտք է մնացած լինեն շատ ուշադրութեան արժանի նշաններ և յիշատակարաններ հին հայոց կեանքի, արուեստի ու հարստարապետութեան. և անշուշտ մի որ այս բոլորը կը յայտնվի, եթէ համառ որոնվի Արմաւիրի տեղը. Եւ միթէ կարող է բոլորովին անհետ լինել, չգտնվել մի ամբողջ քաղաք, որ 2000 տարուց աւելի եղել է մի ազգի կրօնական, քաղաքական և առեւտրական կենտրոնը:

Այժմ ես կանցնեմ կոմս Ուվարովի ընթերցուածքին. թող ներողամիտ լինի ընթերցողը, եթէ ես մի փոքր մանրամասն խօսեմ դրա վրա. որովհետեւ հայոց հնագիտութեամբ հետաքրքրվողները՝ յուսով եմ, յանդիմանելու չեն ինձ դրա համար.

Պ. Ուվարովը սկսեց իր խօսքը նրանից, թէ ինքը առաջ մտադիր է եղել ծանօթանալու Անի քաղաքը և հետազօտել նրա աւերակները. բայց մեր գիտնական հայերէնագէտ պ. Էմինը խորհուրդ է տուել նրան առ այժմ թողնել այդ միջնադարեան՝ համեմատաբար—նոր՝ յիշատակարանները և խուզարկութիւն անել հայոց հնագոյն կառուցուածական մնացորդները՝ իր հետազօտութիւնները սկսելով հայոց հին մայրաքաղաքից—Արմաւիրից, որպէս առաջին և հայկական կեանքի գլխաւոր կենտրոնից. Այս դիտողութեամբ՝ կոմսը ամենից առաջ սկսում է ուսումնասիրել Արմաւիրի տեղը. Բայց հէնց առաջին քայլում նա պատահում է դժուարութիւնների. Արմաւիր մայրաքաղաքի տեղը խորենացին աշխարհագրութեան համեմատաբար այսպէս է ցոյց տալիս. Օրխեան՝ Դիրոսան, որ եղել է Հայաստա-

---

*) Արժանի է ուշադրութեան այն հանգամանքը, որ Քրիստոսից 3 դար յետոյ հայոց մեհեաններում (գոնէ Բագաւանում) յունաց աստուածների շարքում կար և զրադաշտական հուրը—ինչպէս ասում է խորենացին (Գ. Բ. գլ. 77). այսինքն՝ յունաց և պարսից կրօնական պաշտամունքը հաւասար ընդունելութիւն ունէին հայերի մէջ. Այս՝ գուցէ մասամբ՝ հետեւանք լինի այն համբերող (tolérant) քաղաքականութեան, որ մնացել հայերի մէջ Վաղարշակ Ա. Յայտնի է, որ սրա ժամանակ Հայաստանում բացի յունաց կրօնական պաշտամունքից և պարսից՝ որ անշուշտ ինքը հետ բերեց Պարթեւաստանից, առանց հալածանքի գոյութիւն ունէր և հրէից կրօնը.

ձակվի և եղած չորս դատաւորներին կաշառվելի հինգերորդ դատաւորը։»

—

ԴԻԼԻԺԱՆԻՑ մեզ գրում են որ փետրվարի 18-ին այդ քաղաքի հայ թատրոնասէրները ներկայացրին «[illegible] կին» և «փարիզի կօշկակար» պիէսները։ Ներկայացումն շատ աջող եղաւ։ [illegible] թատրոնական գործը առաջ տանելու վրա հանդէսը աւելի են հոգում քան թէ ազատագրել։ Ընկերութիւնը մեծ շնորհակալութիւն է յայտնում տիկին Աստուածատուրեանցին և Գրիգորեանց ու Առաքելեանց օրիորդներին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Անգլիական պառլամենտի ժողովում, մարտի 3-ին, Իռլանդիայում զէնք պահպանելու մասին առաջարկված բիլլի երկրորդ ընթերցանութիւնն էր կատարվում։ Գլադստոնին ընդդիմութեան ծափահարութիւններով ողջունեցին, որովհետև նա բաւական ժամանակ չէր յաճախում նիստերին հիւանդութեան պատճառով։ Իռլանդական պատգամաւոր Դիլլոն յարձակվեց ներքին գործերի մինիստր Հարկորտի վրա, մեղադրելով նրան այն բանի մէջ, որ նա „ցած կերպով“ վիրաւորեց իր անձնական բարեկամ Ջօն Դէվիտին։ Դիլլոն մի և նոյն ժամանակ կրկնեց իր խորհուրդը Իռլանդացիներին՝ զինուորվել, աւելացնելով, որ եթէ նրանք արենդատոր լինէին, տարմանով կը պահէին նրանց, որ կը համարձակվէր փորձել հողից դրանց արտաքսել։ Իռլանդացիների հետ այնպէս վատ են վարվում, որ նրանք պէտք է զինուորված պաշտպանվեն, եթէ որ միջոցներ ունենային, բայց զօրագրգարար միջոցներ չունեն։

Սպիկերը կարգի հրաւիրեց Դիլլոնին, ասելով որ նա քանդում է պարլամենտական կարգերը, քարոզելով ներքին պատերազմ։ Դիլլոն յետ առաւ իր խօսքերը։ Մինիստր Հարկորտ ժողովի ուշադրութիւնը դարձրեց լիգայի քարոզած մտքերի վրա։ Անգլիան այժմ հանդիսանում է, աւելացրեց նա, որ լիգան քարոզում է գիշերական գողութիւն և սպանութիւն։ Դիլլի մի քանի անգամ կարգի հրաւիրեցաւ նրա համար, որ նա միջամտում էր Հարկորտի առաջ խօսելու մէջ։ Բանը նրանով վերջացաւ, որ սպիկէր զրկեց նրան խօսելու իրաւունքից նիստի մնացած ժամանակը, նախագահի իշխանութեամբ չը հնազանդվելու պատճառով։ Այդ վճիռը հաստատվեցաւ 233 ձայների մեծամասնութեամբ 15-ի դէմ։

ԹՈՒՐՔԻԱ

—

„Բէլոսերի“ ընկերութեամբ հեռագրում են Կ.Պօլսից հետևեալը։ Կ.Պօլսի վերադառնալուց յետոյ կոմս Հացֆելդ, երբ առաջին անգամ տեսակցեցաւ սուլթանի հետ, առաջ, որ խաղաղութիւնը պահպանելու համար անհրաժեշտ է բաւականացնել Յունաստանի պահանջներին։ Սուլթանը հիմնաւոր համարելով գերմանական դեսպանի առաջարկութիւնները, խոստացաւ հաղորդել դեսպաններին այն նոր սահմանագիծը, որ Թիւրքիան կարող է ընդունել։ Արտաքին գործերի մինիստր Ասիմ-փաշան էլ պէտք է յայտնէր դեսպաններին նոր սահմանագիծը, բայց մինչև այժմ նա չէ այցելել պետութիւնների ներկայացուցիչներին։ Թիւրքաց մինիստրների խորհուրդը դեռ և այժմ վճիռ չէ կայացրել յոյն-թիւրքական սահմանների վերաբերութեամբ։ Պետութիւնների ներկայացուցիչները այն կարծիքի են, որ գործը կարող էր խաղաղ վախճան ստանալ, եթէ Անգլիան գործ դնէր իր բոլոր ազդեցութիւնը Յունաստանի վրա և յետ պահէր նրան պատերազմական գործողութիւններ սկսելուց։ Այստեղ լուր է տարածված, որ Գերմանիան մտադիր է առաջարկել Սպանիայի մասնակցութիւնը, եթէ մի նոր կոնֆերենցիա հարկաւոր լինի յոյն-թիւրքական վէճը լուծելու համար։

Կ. Պօլսից գրում են „Polit. Corresp.“ լրագրին։ Դեսպանների խորհուրդները լինում են բաւական գաղտնապահ։ Առաջին ժողովի ժամանակ դեսպանները հաղորդեցին միմեանց այն հրահանգները, որոնց համեմատ նրանք պէտք է գործէին։ Յայտնվեցաւ, որ այդ հրահանգները միատեսակ էին և զանազան ձևով խմբագրված։ Դրանց համեմատ դեսպանները ներկայացրին Բ. Դրանը իրանց գրութիւնները, որոնց բովանդակութիւնը մօտաւորապէս հետևեալն է։ Պետութիւնները յոյս են յայտնում, որ Թիւրքաց կառավարութիւնը կը պահպանէ իր խոստմունքը և պատերազմական գործողութիւններ չի սկսի Յունաստանի դէմ։ Գրութիւնների մէջ ասված է, թէ պետութիւնները ՚ի նկատի ունենալով, որ Բ. Դուռը զիջումներ կանի Յունաստանին, յանձնեցին իրանց դեսպաններին բանակցել Բ. Դրան յետ և նպաստել յոյն-թիւրքական վէճի խաղաղութեամբ վերջանալուն։

Այդ գրութիւնները Բ. Դրանը յանձնելուց յետոյ, դեսպանները դիմեցին իրանց պետութիւններին խնդրելով, որ նրանք բոլոր միջոցներ գործ դնեն, որպէս զի Յունաստանը պատերազմական գործողութիւններ չը սկսի։ Այդ խնդիրը անհրաժեշտ դարձաւ, որովհետև Յունաստանը ծառայութեան հրաւիրեց պահեստի զօրքերին։ Բացի այդ սուլթանի պալատի մէջ պատերազմական մի խորհուրդ կայացաւ, որ, գործին պատերազմական տեսակէտից նայելով, վճռեց աւելի զիջումներ չանել, քան թէ խոստացված էր հունվարի 3-ի շրջաբերականի մէջ։ Կ. Պօլսի մէջ պատերազմական պատրաստութիւններ են տեսնվում և դրանք աւելի մեծ չափով են կատարվում, քան թէ ռուս-թիւրքական պատերազմից առաջ, որովհետև Թիւրքերը այն կարծիքի են, որ նոր պատերազմին պետութիւնները կը միջամտեն և Թիւրքիան պէտք է պատրաստ լինի։ Դրամական պակասութիւնը արգելք է դնում պատերազմական պատրաստութիւններին։ Շատ տեղերից հաղորդում են, որ պատերազմական պաշարներով բեռնաւորված նաւերը անկարող են հեռանալ նաւահանգիստներից քարածուխի պակասութեան պատճառով։ Ամերիկայի զինագործարաններին մեծ պատուէրներ են տրված։ Ոչ թէ միայն Թիւրք գեներալները, այլ և զանազան դեսպանատների պատերազմական գործակալները այն կարծիքի են, որ Թիւրքաց զօրքերը աւելի բանով գերազանցում են յունական զօրքերին։ Թիւրքաց կառավարութիւնը մտադիր է Եպիրոսի և Թեսսալիայի մէջ եղած իր զօրքերի թիւը հասցնել 110,000։ Այս հանգամանքները ՚ի նկատի առնելով, շատերը կարծում են, որ դեսպանները բանակցութիւնների ժամանակ մեծ դժուարութիւնների կը հանդիպեն։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Բեռլին, փետրվարի 26

Այս տարի ես մեղաւոր եմ «Մշակի» առաջ, որ առաջին երկու ամիսների ընթացքում միայն մի թղթակցութիւն կարողացայ ուղարկել։ Պատճառն այն է որ շատ զբաղված էի։ Բացի ամփոփական աշխատանքներից, զբաղված եմ այժմ կովկասեան քարերի ժողովածուի հետազօտելով ու որոշելով և ուրիշ կողմից իմ աշակերտների մասնակցութեամբ մի քանի նոր հետազօտութիւններ ենք անում, որոնց մասին իմ լաբորատորիայից շուտով հրատարակվելու է մի շարք բրօշիւրներ։ Այդ բոլորը ինձանից շատ ժամանակ է խլում։

Այսօր ուզեմ մի քանի լուրեր հաղորդել, բայց նախ իմ ուրախութիւնս եմ յայտնում «Մշակի» այս տարվայ աջողութեան համար։ Ուրեմն «Մշակը» երկու ամսվայ ապրողութիւնից յետոյ հասել է այս տարի բաժանորդների այն թւին, որին հասել էր անցեալ գրեթէ ամբողջ տարվայ ընթացքում։ Նա, ուրեմն, հաստատ հիմքի վրա է կանգնած, նա անհրաժեշտութիւն է ճանաչված, նա ապացոյց է զարգացման այն մասի, որ գնալով աճում է, որին պատկանում է ապագան։

Վերջին ժամանակները Բեռլինի այլ և այլ շրջաններում ես առիթ ունեցայ ծանօթանալ մի քանի անձնաւորութիւնների հետ, որոնք նշանաւոր են այսօրվայ թէ գիտութեան և թէ քաղաքական կեանքի մէջ, մանաւանդ դեր են խաղացել հրէական հարցի մէջ։ Կարծում եմ, իմ կոչումն է, մի քանի ընդհանուր գծերով ծանօթացնել ընթերցողներին այդ անձնաւորութիւնների հետ։

Առաջինն է պատգամաւոր Հէնէլ (Hänel) որ մանաւանդ այդ վերջին ժամանակ հռչակվեցաւ իբրև հակասեմիտական շարժման հակառակորդ և հրէաների իրաւունքների պաշտպան։ Նա իր բողոքով պարլամենտի մէջ ստիպեց կառավարութեանը բացարձակ յայտնել այն վճիռը, որ նա ունի հակահրէական շարժման մէջ։ Հէնէլ շատ խիստ կերպով է քննադատում կառավարութեան կողմից բռնած ընթացքը, բայց մանաւանդ հրէաների իրաւունքների թշնամիներին։

Երկրորդ անձնաւորութիւնն է յայտնի դանիացի Բրանդէս (Brandes) որ ինքն հրեայ է և որ պալատական քարոզիչ Շտէկկէրի կողմից անասելի յարձակումների ենթարկվեցաւ իր ազատամիտ ուղղութեան պատճառով։ Բրանդէս

նում 1834 թ., հաստատում է, թէ ինքն անձամբ է Արմաւրի աւերակները և այն բլուրը, որի վրա շինված է եղել քաղաքը։ Այդ աւերակներն են— հիւսիսային ափից, կաւաշէն տների հետքեր և մի քանի բեկորներ։ Իսկ երկրի հայագէտ Սէն-Մարտէնը բոլորովին ուրիշ տեղ է ցոյց տալիս Արմաւիրը. այնպէս որ Շէրմանը արդարացի զարմանք է յայտնում այն տարբերութեամբ, որ նկատելի է Դիւբուաի և Սէն-Մարտէնի նշանակած տեղերի մէջ։ Վերջինի ասելով Արմաւիրը եղել է աւելի արևմուտ՝ [illegible] մի փոքր հարաւ՝ Արաքսի աջ ափի վրա։ Միւս կողմից՝ Անդրկովկասի 5 վերստանոց քարտէզը և Սմէլզմանի յայտնի աշխարհագրական բառարանը մասամբ համաձայն են Դիւբուաի ցոյց տւած կէտին, նշանակելով Արմաւրի տեղը Շահրիարի, Կարգուզուլուի և Կուգուզիւզարի (?) մէջ՝ Արաքսի ձախ ափի վրա։ Արանից երևում է, որ Ուվարովը մանաւանդ պէտք է այցելէր Արմաւրի տեղը հաստատ որոշել և յետոյ արդէն յիշատակարաններ և զանազան հնութիւններ հետազօտել։

Կոմսի ասելով Արմաւրի (Նէթճալիբէկի) տեղը ձևացնում է մի հարթ, կրակատ դաշտավայր, ցնցամեծ բլրակներով ծածկված, որոնք, ըստ պ. Ալանդարանի կարծիքով, (մի և նոյնը նկատել է և Դիւբուան) անշուշտ գոյացել են հրաբուխի վիժումներից։ Շահրիար, Կարգուզուլու և Կուգուզիւզար գիւղերի մէջ գտնված բլուրը, ինչպէս տեսանք, ունէր զանազան աւերակների բեկորներ։ Այդ բլուրը շրջապատված է 4 կամ 5 շարք պատերով։ Պատերը՝ արտաքին կողմից — շինված են անտաշ քարաշէն քարերից, կանոնաւոր շարված և հարթ տաշած. բայց այդ քարերը այնպէս են միացրած միմեանց հետ, որ նրանց մէջը մնում է երկու մատի հաստութեամբ խոռոչական միջոց — այնպէս, ինչպէս առհասարակ շինում են այժմ Անդրկովկասի շատ քաղաքների տները։ Ներքին կողմից պատերի շինուածքը մի և նոյնն է, միայն քարերի տաշուածքը աւելի անհոգութեամբ է կատարված։ Այդ արտաքին և ներքին պատերի մէջը լցրած է կրով, աւազով և ցանկրած Արաքսի յատակից բերած մանր քարերով։ Հէնց այս տեղն է, որ Դիւբուան Արմաւիր է անւանում և որ գտնվում է ցամքած Արաքսից 1½ վերստ, Արաքսից 5 վերստ և Էջմիածնից 25 վերստ հեռաւորութեամբ։ Բայց խնդիրը այն է, որ այս պատերը համեմատաբար նոր շինուածք են, որովհետև պ. Ալանդարանի ասելով, հին ժամանակները (թէ յոյները, թէ հռովմայեցիք և թէ շատ արևելեան ազգերը) պատերը շինում էին առհասարակ տաշած մէջը (չծեփած) միայն երկու կողմից (ներսից ու դրսից) ամբողջ քարեր շարելով, իսկ մէջը լցրած պատերը սկսան երևել միայն 2-րդ դարում Քրիստոսից յետոյ։— Արանից յետոյ կոմս Ուվարովը փորում է բլուրի սարահարթը։ Յայտնի է, որ թէև քաղաքները զանազան պատահարներից քանդվում կործանվում են, երբեմն էլ բոլորովին ծածկվում հրաբուխի վիժումից (ինչպէս Իտալիայում Պոմպէյ և Հերկուլանում քաղաքները), բայց քաղաքը երբեք չէ կարող անհետանալ, կորչել այնպէս, որ նրանից հետք չը մնայ։ Այդ բոլոր կործանիչ պատահարներից յետոյ մնում են նորա աւերակներ, նշաններ—երբեմն ամբողջ շարք քըշաւանդարանների բոլորովին անեղծ — մնում են նշխարներ անցած գնացած կեանքի, անցած գնացած արուեստի ու ճարտարապետութեան։ Այդ նշխարներ ու նշաններ պահողը՝ հողն է, որ մի քանի արշին հաստ ամէն խորութեան մէջ ամփոփում է ամեն բան։ Հողի այդ խաւ շերտը, որ հնագէտները կուլտուրական շերտ են անւանում, ձեռք է զարկում Ուվարովը հետազօտելու։ Կուլտուրական շերտը այստեղ՝ ինչպէս յայտնվեցաւ՝ 4½ արշինաչափ է. հողը բաց է անում պատեր, դարբասներ, թոնիրներ— առանց մի նշանակութեան հնագիտութեան համար։ Մինչև անգամ այդտեղ դուրս է գալիս բրուտի մի ամբողջ խանութ՝ հարիւրաւոր կաւէ ամաններով (լղուզներով)։ Բայց դրանք բոլորը շինված են նոր ձևով ու ճաշակով, առանց որ և է հնութեան նշանի կամ աւանդութեան։— Թողնելով այս բլուրը և նրա սարահարթը՝ Ուվարովը իր հետազօտութիւնները տեղափոխում է մասնաւոր բարձրութեան վրա, և արդարև՝ այստեղից նա հանում է մի քանի բեկորներ, որոնք ապացոյց են խորին հնութեան — օրինակ՝ քարեղէն զէնքեր, քարէ դանակներ և այլն՝ — ամենահին ձևերով։ Չը բաւականանալով այս մի քանի հատ նախապատմական յիշատակների բեկորներով, կոմսը սկսում է հետազօտել դաշտավայրը, որը՝ ինչպէս վերև յիշած էր՝ ծածկված է հրաբուխի վիժման ամբողջ [illegible]։ Այդ [illegible] շատ ապացոյց է հողի աղքատութեան համար և ունեցած բնակիչները՝ հանգստացան այդ, ծածկված և ունում են իրանց արտերը պարարտացնելու։ Այնտեղ կոմսը՝ կուլտուրական շերտը գտնելու համար փորել է տալիս մի առաջին փոս 3—4 սաժէն երկայնութեամբ, 8 արշին լայնութեամբ և 3 արշին խորութեամբ և դէմ է առնում զանազան գետի յատակի, որ համանման է Արաքսի ճիւղերից մէկին լինելու է, բայց որանից նա ոչինչ չէ գտնում։ Բայց դարձեալ բաւական չէ համարելով իր բոլոր արած փորձերը, Ուվարովը դիմում է մի քանի բլրակների 1 արշին կամ 1 արշին 4 վերշոկ բարձրութեամբ. առհասարակ տեսնելու էր մի ուշադրութեան արժանի բան չէ դուրս գալի, բացի թանկերից և մի ամբողջ շարք թռչնապերից։ Պ. Ալանդարանը դրական կերպով պատմում էր, ինչպէս թաղում էր իր սիրտը ամեն անգամ, երբ զանազան կաւէ ամաններ էին դուրս հանում փոսի միջից։ Նա ասում էր. «Հիմանի պէս ես էլ խոկում փորում էի բլուրի մէջ և շտապում ձեռք տանում մէջը, յուսալով որ յանկարծ գտնեմ հայկական հին կեանքի և արուեստի նշաններ, բայց ափսոս, որ Շլիմանի *) նման ես բաղդաւոր չէի։ Բլուրները միշտ դատարկ էին լինում...»— կոմս Ուվարովը այստեղ էլ չէ յուսահատվում բոլոր անյաջողութիւններից. դեռ անշարժ մնում էր մի ամբողջ շարք գերեզմաններ և նա ձեռնամուխ է լինում նրանց բացահայտութեան։ Այդ գերեզմանները գտնվում են վերևը յիշած բլուրից դէպի արևելք. մի քանի նրանցից կարծում են ¾ արշին խորութեամբ հասարակ փոսեր, առանց որ և է պատրաստութեան, և՝ ինչպէս երևում է, գլուխները դէպի

---

*) Ներկայ դարու յայտնի հնագէտ և Տրովադայի շատ հնութիւնները գտնող։